ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ

ՀՀ, 0001 Երևան, Հյուսիսային 1
+374 12 88 88 88
info@ligainsurance.am
ligainsurance.am

«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ » ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ
Գործադիր տնօրեն
Գագիկ Գրիգորյանի
24.05.2023թ. թիվ 511 հրամանով

# ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ «ՎԱՐՈՐԴ» ԾՐԱԳԻՐ

**Փաստաթղթի կոդ՝ F750-03-02/2**
**Խմբագրություն՝ 06**

## ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ «ՎԱՐՈՐԴ» ԾՐԱԳԻՐ

Սույն ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակվել է «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ապահովագրող) Դժբախտ պատահարներից ապահովագրության գործող պայմանների (այսուհետ՝ Պայմաններ) հիման վրա: Գործող են համարվում այն պայմանները, որոնց հաստատման ամսաթիվը և խմբագրությունը նշված են ապահովագրության պայմանագրում/վկայագրում (այսուհետ՝ Պայմանագիր):
Սույն Ծրագիրը հանդիսանում է Պայմանների և Ծրագրի հիման վրա կնքված Պայմանագրի անբաժանելի մասը: Սույն Ծրագիրը հաստատված է «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ գործադիր տնօրենի կողմից 24.05.2023թ.-ի թիվ 511 հրամանով:

## ԳԼՈՒԽ 1. ԾՐԱԳՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ** են հանդիսանում հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի գույքային շահերը՝ կապված դժբախտ պատահարի հետևանքով հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հետ:

**ԱՊԱՀՈՎԱԴԻՐ** հանդիսանում է ցանկացած գործունակ ֆիզիկական անձ, ում տարիքը 18-ից 70 տարեկան է (70-ը ներառյալ) Պայմանագրի կնքման պահին կամ իրավաբանական անձ, ով Ապահովագրողի հետ կնքում է Պայմանագիր:

**ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁ** է հանդիսանում սույն Ծրագրի 2.1. կետի 2.1.1. կամ 2.1.2. ենթակետերում սահմանված անձը՝ կախված Պայմանագրով ընտրված կոմբինացիայից:

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻՆՔ** ֆիզիկական անձինք են՝ ուղևորներ և գտնվում են հիմնական Ապահովագրված անձի կողմից վարվող ԱՄ-ի սրահում ՃՏՊ տեղի ունենալու պահին, և որոնց օգտին կնքվում է Պայմանագիրը: Լրացուցիչ Ապահովագրված անձանց քանակը կախված է փոխադրամիջոցի նստատեղերի քանակից, սակայն չի կարող գերազանցել 8-ը:

**ՇԱՀԱՌՈՒ** Հիմնական ապահովագրված անձի դեպքում Հիմնական ապահովագրված անձն է, Լրացուցիչ ապահովագրված անձի դեպքում Լրացուցիչ ապահովագրված անձն է, իսկ նրանց մահվան դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձինք:

**ՃՏՊ՝** ճանապարհով տրանսպորտային միջոցի շարժման ընթացքում և դրա մասնակցությամբ առաջացած դեպքն է, որի հետևանքով զոհվել կամ վիրավորվել են մարդիկ կամ վնասվել են տրանսպորտային միջոցներ, բեռներ, կառույցներ կամ պատճառվել է այլ նյութական վնաս:

**ԱՄ-**ն սույն Ծրագրի 2.1. կետի 2.1.1. կամ 2.1.2. ենթակետերում սահմանված ցանկացած օգտագործման նպատակի և ցանկացած տեսակի (բացառությամբ՝ մոտոտրանսպորտի (ներառյալ՝ մոտոցիկլ, տրիցիկլ, քվադրիցիկլ)) տրանսպորտային միջոցն է՝ կախված Պայմանագրով ընտրված կոմբինացիայից:

## ԳԼՈՒԽ 2. ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.

**2.1.** Պայմանագիրը կարող է կնքվել ստորև բերված 2 կոմբինացիաներից մեկով՝
**2.1.1. Կոմբինացիա 1 (ԴՊ Վարորդ),** որի դեպքում.
**2.1.1.1.** Հիմնական Ապահովագրված անձ է հանդիսանում Պայմանագրում նշված գործունակ ֆիզիկական անձը, ում օգտին Ապահովադիրն Ապահովագրողի հետ կնքում է Պայմանագիր և ում տարիքը 18-ից 70 տարեկան է (70-ը ներառյալ) Պայմանագրի կնքման պահին,

**2.1.1.2.** ԱՄ է հանդիսանում Պայմանագրում նշված Հիմնական Ապահովագրված անձի կողմից վարվող ցանկացած տեսակի (բացառությամբ՝ մոտոսպորտի (ներառյալ՝ մոտոցիկլ, տրիցիկլ, քվադրիցիկլ)) տրանսպորտային միջոցը:
**2.1.2. Կոմբինացիա 2 (ԴՊ Մեքենա),** որի դեպքում.
**2.1.2.1.** Հիմնական Ապահովագրված անձ է հանդիսանում ցանկացած գործունակ ֆիզիկական անձ, ով ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին հանդիսանում է Պայմանագրում նշված ԱՄ-ի վարորդ և ում տարիքը ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին 18-70 տարեկան է (70-ը ներառյալ):
**2.1.2.2.** ԱՄ է հանդիսանում Պայմանագրում նշված ցանկացած տեսակի (բացառությամբ՝ մոտոտրանսպորտի (ներառյալ՝ մոտոցիկլ, տրիցիկլ, քվադրիցիկլ)) տրանսպորտային միջոցը:
**2.2.** Պայմանագիրը կարող է կնքվել 4 տարբերակով՝
**2.2.1. Տարբերակ 1**, որի դեպքում ապահովագրական պատահարներ են հանդիսանում Պայմանագրի գործողության ընթացքում հիմնական Ապահովագրված անձի կողմից ԱՄ-ն վարելիս ՃՏՊ–ի ենթարկվելու հետևանքով տեղի ունեցած դժբախտ պատահարի արդյունքում, հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձին պատճառված մարմնական վնասվածքը և/կամ Պայմանագրի գործողության ընթացքում հիմնական Ապահովագրված անձի կողմից ԱՄ-ն վարելիս ՃՏՊ-ի ենթարկվելու հետևանքով քիմիական նյութերով և/կամ կենսաբանական ծագման թույներով սուր թունավորումը, և/կամ II, III, IV աստիճանների թերմիկ և/կամ քիմիական այրվածքը, ինչպես նաև դրանց հետևանքով հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի I, II, III խմբի հաշմանդամության, «հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռք բերումը, մահը (ֆիքսված գումարով հատուցում՝ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի կիրառմամբ՝ համաձայն սույն Ծրագրի և սույն Ծրագրին կից Հավելված 1-ի):
**2.2.2. Տարբերակ 2**, որի դեպքում ապահովագրական պատահարներ են հանդիսանում Պայմանագրի գործողության ընթացքում հիմնական Ապահովագրված անձի կողմից ԱՄ-ն վարելիս ՃՏՊ-ի ենթարկվելու հետևանքով տեղի ունեցած դժբախտ պատահարի արդյունքում հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձին պատճառված մարմնական վնասվածքի և/կամ Պայմանագրի գործողության ընթացքում հիմնական Ապահովագրված անձի կողմից ԱՄ-ն վարելիս ՃՏՊ-ի ենթարկվելու հետևանքով քիմիական նյութերով և/կամ կենսաբանական ծագման թույներով սուր թունավորման և/կամ II, III, IV աստիճանների թերմիկ և/կամ քիմիական այրվածքի հետևանքով հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի I, II, III խմբի հաշմանդամության, «հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռք բերումը, մահը (ֆիքսված գումարով հատուցում՝ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի կիրառմամբ՝ համաձայն սույն Ծրագրի):
**2.2.3. Տարբերակ 3**, որի դեպքում ապահովագրական պատահարներ են հանդիսանում Պայմանագրի գործողության ընթացքում հիմնական Ապահովագրված անձի կողմից ԱՄ-ն վարելիս ՃՏՊ-ի ենթարկվելու հետևանքով տեղի ունեցած դժբախտ պատահարի արդյունքում հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձին պատճառված մարմնական վնասվածքը և/կամ ՃՏՊ-ի ենթարկվելու հետևանքով քիմիական նյութերով և/կամ կենսաբանական ծագման թույներով սուր թունավորումը և/կամ II, III, IV աստիճանների թերմիկ և/կամ քիմիական այրվածքը, (փաստացի կատարված առաջնային բժշկական ծախսերի հատուցում՝ համաձայն սույն Ծրագրի):
**2.2.4. Տարբերակ 4**, որի դեպքում ապահովագրական պատահարներ են հանդիսանում Պայմանագրի գործողության ընթացքում հիմնական Ապահովագրված անձի կողմից ԱՄ-ն վարելիս ՃՏՊ-ի ենթարկվելու հետևանքով տեղի ունեցած դժբախտ պատահարի արդյունքում հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձին պատճառված մարմնական վնասվածքը և/կամ Պայմանագրի գործողության ընթացքում հիմնական Ապահովագրված անձի կողմից ԱՄ-ն վարելիս ՃՏՊ-ի ենթարկվելու հետևանքով քիմիական նյութերով և/կամ կենսաբանական ծագման թույներով սուր թունավորումը և/կամ II, III, IV աստիճանների թերմիկ և/կամ քիմիական այրվածքը, (փաստացի կատարված առաջնային բժշկական ծախսերի հատուցում՝ համաձայն սույն Ծրագրի), ինչպես նաև դրանց արդյունքում հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի I, II, III խմբի հաշմանդամության, «հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռք բերումը, մահը (ֆիքսված գումարով հատուցում՝ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի կիրառմամբ՝ համաձայն սույն Ծրագրի):

**2.3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ**՝ մինչև 1 տարի է:

**2.4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ**՝ ՀՀ, ԼՂՀ:

**2.5. ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ** հետևյալ անձինք.
**2.5.1.** I և II խմբի հաշմանդամները,

**2.5.2.** կայուն նյարդային կամ հոգեբանական խանգարումներով և/կամ հիվանդություններով տառապող անձինք,
**2.5.3.** անձինք, ովքեր հաշվառված են նյարդահոգեբանական և/կամ նարկոլոգիական և/կամ հակատուբերկուլյոզային դիսպանսերներում,
**2.5.4.** ստացիոնար, ամբուլատոր բուժման կամ հետազոտության մեջ գտնվող անձինք (մինչև նրանց լրիվ բուժվելը),
**2.5.5.** էպիլեպսիայով, օնկոլոգիական հիվանդություններով, ՁԻԱՀ-ով կամ այլ իմունոդեֆիցիտային հիվանդություններով անձինք,
**2.5.6.** անձինք, ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում կամ ազատազրկման դատապարտված անձինք,
**2.5.7.** առողջական վիճակից ելնելով` մշտական խնամքի կարիք ունեցող անձինք,
**2.5.8.** զինվորական ծառայություն անցնող անձինք:
**2.6.** ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ սույն Ծրագրի 2.5. կետում նշված կատեգորիաներից ցանկացածին պատկանող և/կամ Պայմանագրի կնքման պահին Ծրագրով սահմանված տարիքին չհամապատասխանող անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասները, բացառությամբ հաշմանդամության այն դեպքերի, որոնք առաջացել են հիմնական Ապահովագրված անձի մոտ Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարի արդյունքում:
**2.7.** Ապահովագրական պատահար են հանդիսանում հետևյալ իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի գործողության ընթացքում, բացառությամբ սույն Ծրագրի 2.8. կետում և Պայմանների Գլուխ 11-ում նշված իրադարձությունների.
**2.7.1. Հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի մարմնական վնասվածքը (ֆիքսված գումարով հատուցում՝ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի կիրառմամբ),** այն է՝ Պայմանագրի գործողության ընթացքում հիմնական Ապահովագրված անձի կողմից ԱՄ-ն վարելիս ՃՏՊ–ի ենթարկվելու հետևանքով տեղի ունեցած դժբախտ պատահարի արդյունքում հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձին պատճառված մարմնական վնասվածքը, ինչպես նաև Պայմանագրի գործողության ընթացքում հիմնական Ապահովագրված անձի կողմից ԱՄ-ն վարելիս ՃՏՊ–ի ենթարկվելու հետևանքով քիմիական նյութերով և/կամ կենսաբանական ծագման թույներով **սուր թունավորումը** և/կամ II, III, IV աստիճանների թերմիկ և/կամ քիմիական **այրվածքը:** Նշված իրադարձությունները հանդիսանում են ապահովագրական պատահար, եթե դրանք տեղի են ունեցել Պայմանագրի գործողության ընթացքում հիմնական Ապահովագրված անձի կողմից ԱՄ-ն վարելիս ՃՏՊ-ի ենթարկվելու արդյունքում և զուգորդվել են հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի առողջությանը` սույն Ծրագրին կից Հավելված 1-ով (Ապահովագրական հատուցումների չափերի աղյուսակ) նախատեսված վնաս պատճառելով (այսուհետ` «Մարմնական վնասվածք, սուր թունավորում, այրվածք ՃՏՊ-ի ենթարկվելու արդյունքում» (ֆիքսված գումարով հատուցում՝ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի կիրառմամբ) ապահովագրական պատահար/ռիսկ):
**2.7.2. Հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի մարմնական վնասվածքը (փաստացի կատարված առաջնային բժշկական ծախսերի հատուցում),** այն է՝ Պայմանագրի գործողության ընթացքում հիմնական Ապահովագրված անձի կողմից ԱՄ-ն վարելիս ՃՏՊ–ի ենթարկվելու հետևանքով տեղի ունեցած դժբախտ պատահարի արդյունքում հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձին պատճառված մարմնական վնասվածքը, ինչպես նաև Պայմանագրի գործողության ընթացքում հիմնական Ապահովագրված անձի կողմից ԱՄ-ն վարելիս ՃՏՊ-ի ենթարկվելու հետևանքով քիմիական նյութերով և/կամ կենսաբանական ծագման թույներով **սուր թունավորումը** և/կամ II, III, IV աստիճանների թերմիկ և/կամ քիմիական **այրվածքը:** Նշված իրադարձությունները հանդիսանում են ապահովագրական պատահար, եթե դրանք տեղի են ունեցել Պայմանագրի գործողության ընթացքում հիմնական Ապահովագրված անձի կողմից ԱՄ-ն վարելիս ՃՏՊ-ի ենթարկվելու արդյունքում և զուգորդվել են հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի առողջությանը վնաս պատճառելով և հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձն իրադարձությունները տեղի ունենալուց հետո 48 (քառասունութ) ժամվա ընթացքում դիմել է Բժշկական հաստատություն (այսուհետ` «Մարմնական վնասվածք, սուր թունավորում, այրվածք ՃՏՊ-ի ենթարկվելու արդյունքում» (փաստացի կատարված առաջնային բժշկական ծախսերի հատուցում) ապահովագրական պատահար/ռիսկ):
**2.7.3. I, II, III խմբի հաշմանդամության, «հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռք բերումը,** որն առաջին անգամ սահմանվում է հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձին Պայմանագրի գործողության ընթացքում հիմնական Ապահովագրված անձի կողմից ԱՄ-ն վարելիս ՃՏՊ-ի ենթարկվելու հետևանքով տեղի ունեցած դժբախտ պատահարի արդյունքում հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձին պատճառված մարմնական վնասվածքի և/կամ քիմիական նյութերով և/կամ

կենսաբանական ծագման թույներով սուր թունավորման և/կամ II, III, IV աստիճանների թերմիկ և/կամ քիմիական այրվածքի արդյունքում: Հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի I, II, III խմբի հաշմանդամության, «հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռք բերումը համարվում է ապահովագրական պատահար, եթե այն տեղի է ունեցել Պայմանագրի գործողության ընթացքում կամ հաշմանդամության պատճառ հանդիսացող իրադարձությունների առաջացման օրվանից սկսած տվյալ հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի գծով ապահովագրության ժամկետին հավասար ժամկետի ընթացքում: Այս ժամկետը, սակայն չի կարող պակաս լինել 3 ամսից և ավել 12 ամսից (այսուհետ՝ «I, II, III խմբի հաշմանդամության, «հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռք բերում ՃՏՊ-ի ենթարկվելու արդյունքում» ապահովագրական պատահար/ռիսկ):

**2.7.4. Հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի մահը**, որը հանդիսացել է Պայմանագրի գործողության ընթացքում հիմնական Ապահովագրված անձի կողմից ԱՄ-ն վարելիս ՃՏՊ-ի ենթարկվելու հետևանքով ի հայտ եկած դժբախտ պատահարի արդյունքում հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձին պատճառված մարմնական վնասվածքի և/կամ Պայմանագրի գործողության ընթացքում հիմնական Ապահովագրված անձի կողմից ԱՄ-ն վարելիս ՃՏՊ-ի ենթարկվելու հետևանքով առաջացած քիմիական նյութերով և/կամ կենսաբանական ծագման թույներով սուր թունավորման և/կամ II, III, IV աստիճանների թերմիկ և/կամ քիմիական այրվածքի, ինչպես նաև շնչուղիներ օտար մարմնի հանկարծակի ընկնելու՝ շնչահեղձման, ջրահեղձման, անաֆիլակտիկ շոկի, մարմնի գերսառեցման հետևանք: Հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի մահը համարվում է ապահովագրական պատահար, եթե այն տեղի է ունեցել Պայմանագրի գործողության ընթացքում կամ մահվան պատճառ հանդիսացող իրադարձությունների առաջացման օրվանից սկսած տվյալ հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի գծով ապահովագրության ժամկետին հավասար ժամկետի ընթացքում: Այս ժամկետը, սակայն, չի կարող պակաս լինել 3 ամսից և ավել 12 ամսից (այսուհետ՝ «Մահ ՃՏՊ-ի ենթարկվելու արդյունքում» ապահովագրական պատահար/ռիսկ):

**2.8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՉԵՆ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ**

**2.8.1.** Պայմանների 11-րդ գլխում սահմանված իրադարձությունները,

**2.8.2.** այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել.

**2.8.2.1.** հիմնական Ապահովագրված անձի կողմից ավտո և մոտոսպորտով պրոֆեսիոնալ զբաղվելու, մրցույթներում, փորձարկումներում ԱՄ-ն վարելու հետևանքով,

**2.8.2.2.** հիմնական Ապահովագրված անձի կողմից որոշակի վճարի դիմաց ուղևորներ և/կամ բեռներ տեղափոխելու նպատակով ԱՄ-ն վարելու հետևանքով,

**2.8.3.** այն իրադարձությունը, երբ ԱՄ-ի սրահի մեջ գտնվող ուղևորների քանակը ՃՏՊ տեղի ունենալու պահին գերազանցում է դրա տեխնիկական բնութագրով նախատեսված նստատեղերի քանակը,

## ԳԼՈՒԽ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

**3.1. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ** վճարվում է Ապահովագրողի կողմից հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի հետ ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Պայմանագրով նախատեսված ծավալով Ապահովադրի կողմից Պայմանագրում սահմանված չափով և ժամկետներում ապահովագրավճարը վճարված լինելու պայմանով:

**3.2.** Ապահովագրողը ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցումը վճարում է հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձին, նրա ներկայացուցչին (այդ թվում՝ օրինական ներկայացուցչին), իսկ հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի մահվան դեպքում՝ Պայմանագրում նշված այլ Շահառուին: Հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի մահվան դեպքում Պայմանագրում բացի Ապահովագրված անձից այլ շահառու նշված չլինելու դեպքում հատուցումը վճարվում է Ապահովագրված անձի ժառանգներին:

**3.3.** Ապահովագրական հատուցումն ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում կատարվում է հետևյալ չափերով՝

**3.3.1. «Մարմնական վնասվածք, սուր թունավորում, այրվածք ՃՏՊ-ի ենթարկվելու արդյունքում» (ֆիքսված գումարով հատուցում՝ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի կիրառմամբ) ռիսկ.** հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի գծով Պայմանագրի կնքման պահին սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի կիրառմամբ ստացված գումարի չափով (կախված վնասվածքի, սուր թունավորման, այրվածքի ծանրությունից՝ համաձայն սույն Ծրագրին կից Հավելված 1-ի),

**3.3.2. Մարմնական վնասվածք, սուր թունավորում, այրվածք ՃՏՊ-ի ենթարկվելու արդյունքում» (փաստացի կատարված առաջնային բժշկական ծախսերի հատուցում) ռիսկ.** Պամանագրի գործողության ընթացքում հիմնական Ապահովագրված անձի կողմից ԱՄ-ն վարելիս ՃՏՊ-ի ենթարկվելու արդյունքում տեղի ունեցած դժբախտ պատահարի արդյունքում հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձին պատճառված մարմնական վնասցածքի և/կամ Պամանագրի գործողության ընթացքում հիմնական Ապահովագրված անձի կողմից ԱՄ-ն վարելիս ՃՏՊ-ի ենթարկվելու արդյունքում քիմիական նյութերով և/կամ կենսաբանական ծագման թույներով սուր թունավորման և/կամ II, III, IV աստիճանների թերմիկ և/կամ քիմիական այրվածքի գծով փաստացի կատարված առաջնային բժշկական ծախսերի չափով՝ Պայմանագրի կնքման պահին հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի գծով սահմանված ապահովագրական գումարի (նվազեցված Պայմանագրի շրջանակներում հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի գծով նախկինում իրականացված ապահովագրական հատուցումների չափով) սահմաններում,

**3.3.3. «I, II, III խմբի հաշմանդամության, «հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռք բերում ՃՏՊ-ի ենթարկվելու արդյունքում» ռիսկ**. կախված հաշմանդամության խմբից՝ հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի գծով Պայմանագրի կնքման պահին սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ սույն Ծրագրի 3.3. կետի 3.3.3.1. և 3.3.3.2. ենթակետերում նշված տոկոսի կիրառմամբ ստացված գումարի չափով՝

**3.3.3.1.** հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձանց համար, ովքեր չեն հանդիսացել հաշմանդամ մինչև նրանց վրա Պայմանագրի գործողության տարածումը.

- I խմբի հաշմանդամություն, «հաշմանդամ երեխա» կարգավիճակ՝ 100 տոկոս,
-II խմբի հաշմանդամություն՝ 70 տոկոս,
-III խմբի հաշմանդամություն՝ 40 տոկոս,

**3.3.3.2.** հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձանց համար, ովքեր հանդիսացել են III խմբի հաշմանդամ մինչև նրանց վրա Պայմանագրի գործողության տարածումը.

-I խմբի հաշմանդամություն՝ 40 տոկոս,
- II խմբի հաշմանդամություն՝ 20 տոկոս,

**3.3.4. «Մահ ՃՏՊ-ի ենթարկվելու արդյունքում» ռիսկ.** հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի գծով Պայմանագրի կնքման պահին սահմանված ապահովագրական գումարի (նվազեցված Պայմանագրի շրջանակներում հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի գծով նախկինում իրականացված ապահովագրական հատուցումների չափով) 100 տոկոսի չափով: Հիմնական Ապահովագրված անձի մահվան ռիսկի գծով հիմնական Ապահովագրված անձանց գծով սահմանված ապահովագրական գումարի 100 տոկոսի չափով հատուցում իրականացնելու դեպքում Պայմանագրի գործողությունը դադարում է:

**3.4.** Այն դեպքում, երբ տվյալ հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի գծով ապահովագրական հատուցում վճարելուց հետո ներկայացվում են նոր հայտ և փաստաթղթեր, որոնք հիմք են հանդիսանում.

**3.4.1.** միևնույն պատահարի գծով տվյալ հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձին լրացուցիչ ապահովագրական հատուցում վճարելու համար, վերջինս իրականացվում է նախկինում տվյալ պատահարի և տվյալ հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի գծով վճարված ապահովագրական հատուցումը նվազեցնելով,

**3.4.2.** այլ պատահարի գծով տվյալ հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձին ապահովագրական հատուցում վճարելու համար, վերջինս իրականացվում է առանց նախկին պատահարների գծով վճարված ապահովագրական հատուցումները նվազեցնելու:

**3.5.** Պայմանագրի գործողության ընթացքում հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի հետ տեղի ունեցած մեկ կամ մի քանի ապահովագրական պատահարների գծով ապահովագրական հատուցումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել Պայմանագրի կնքման պահին հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի գծով սահմանված/ ապահովագրական գումարի մեծությունը:

## ԳԼՈՒԽ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

**4.1.** Պայմանագրում սահմանվում է.

**4.1.1.** ապահովագրական գումար հիմնական Ապահովագրված անձի գծով,

**4.1.2.** ընդհանուր ապահովագրական գումար լրացուցիչ Ապահովագրված անձանց գծով: Այս դեպքում յուրաքանչյուր լրացուցիչ Ապահովագրված անձի գծով ապահովագրական գումարի մեծությունը որոշվում է այն փոխադրամիջոցի նստատեղերի քանակին (չհաշված վարորդի

նստատեղը) հարաբերելով, որը վարելիս հիմնական Ապահովագրված անձը ենթարկվել է ՃՏՊ-ի և արդյունքում տուժել է ինքը և/կամ լրացուցիչ Ապահովագրված անձ,

**4.1.3.** ընդամենը ապահովագրական գումար հիմնական և լրացուցիչ Ապահովագրված անձանց գծով:

**4.2.** Պայմանագրի գծով հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձանց գծով սահմանված ապահովագրական գումարը յուրաքանչյուր ապահովագրական հատուցման վճարումից հետո նվազում է հատուցված գումարի չափով:

**4.3.** Սույն Ծրագրի պայմանների հիման վրա կնքված Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի մեծությունը յուրաքանչյուր հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի գծով ցանկացած դեպքում չի կարող գերազանցել 2,000,000 (երկու միլիոն) ՀՀ դրամը:

## ԳԼՈՒԽ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

**5.1.** Ապահովագրավճարը վճարվում է Ապահովադրի կողմից միանվագ, Պայմանագրի կնքման պահին, կանխիկ կամ Ապահովագրողի հաշվարկային հաշվին փոխանցում կատարելով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ապահովագրավճարը վճարվում է ՀՀ դրամով՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

**5.2.** Ապահովագրավճարի մեծությունը որոշվում է՝ ելնելով Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի մեծությունից և Պայմանագրում նշված ապահովագրության տարբերակից:

**5.3.** Այն դեպքում, երբ Պայմանագիրը կնքվում է Կոմբինացիա 1 (ԴՊ Վարորդ)-ով և Հիմնական ապահովագրված անձը վարում է տարբեր տեսակի ԱՄ-ներ, ապա ապահովագրավճարի մեծությունը հաշվարկվում է ամենաբարձր սակագնին համապատասխանող ԱՄ տեսակի համար:

## ԳԼՈՒԽ 6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

**6.1.** Սույն Ծրագրի համաձայն կնքված Պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով:

**6.2.** Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն:

**6.3.** Սույն Ծրագրով չնախատեսված մնացած բոլոր դեպքերում գործում են Պայմանների դրույթները:

**6.4.** Վիճելի հարցեր լուծելու դեպքում Պայմանների հիման վրա մշակված սույն Ծրագրի դրույթները գերակայող ուժ ունեն Պայմանների նկատմամբ, իսկ Պայմանագրի դրույթները գերակայող ուժ ունեն Պայմանների և Պայմանների հիման վրա մշակված սույն Ծրագրի նկատմամբ:

**ՀԱՎԵԼՎԱԾ 1**

**«__» ________, 20__թ.-ին կնքված թիվ _________ Պայմանագրի**

**ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՉԱՓԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ**
**(ապահովագրական գումարի նկատմամբ %)**

| ՎՆԱՍԻ ԲՆՈՒՅԹԸ (մարմնական վնասվածքներ, այրվածքներ, սուր թունավորում, օրգանների / օրգան համակարգերի / վերջույթների / վերջույթների առանձին սեգմենտների կորուստ կամ ֆունկցիայի խանգարում) | ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓ (% ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ) |
|---|---|
| **1. Կոնքի ոսկրերի կոտրվածքներ (բացի պոչուկից)՝** | |
| ա) Բազմակի կոտրվածքներ (առնվազն մեկ բաց և մեկ լրիվ) | 70 |
| բ) Մնացած բոլոր բաց կոտրվածքները | 50 |
| գ) Բազմակի կոտրվածքներ, առնվազն մեկ լրիվ | 30 |
| դ) Մնացած բոլոր կոտրվածքները | 20 |
| **2. Ազդրոսկրի կոտրվածք՝** | |
| ա) Բազմակի կոտրվածքներ (առնվազն մեկ բաց և մեկ լրիվ) | 50 |
| բ) Մնացած բոլոր բաց կոտրվածքները | 40 |
| գ) Բազմակի կոտրվածքներ, առնվազն մեկ լրիվ | 30 |
| դ) Մնացած բոլոր կոտրվածքները | 20 |
| **3. Սրունքի, անրակի, սրունքի կոճի, արմնկային հոդի, բազկոսկրի կամ նախաբազկի կոտրվածքներ (ներառյալ նախադաստակը, բացառությամբ՝ ճաճանչոսկրի կոտրվածք տիպիկ տեղում)՝** | |
| ա) Բազմակի կոտրվածքներ (առնվազն մեկ բաց և մեկ լրիվ) | 40 |
| բ) Մնացած բոլոր բաց կոտրվածքները | 30 |
| գ) Բազմակի կոտրվածքներ, առնվազն մեկ լրիվ | 20 |
| դ) Մնացած բոլոր կոտրվածքները | 12 |
| **4. Ստորին ծնոտի կոտրվածք՝** | |
| ա) Բազմակի կոտրվածքներ (առնվազն մեկ բաց և մեկ լրիվ) | 30 |
| բ) Մնացած բոլոր բաց կոտրվածքները | 20 |
| գ) Բազմակի կոտրվածքներ, առնվազն մեկ լրիվ | 16 |
| դ) Մնացած բոլոր կոտրվածքները | 8 |
| **5. Թիակի, ծնկոսկրի, կրծոսկրի, կրնկոսկրի, դաստակի (բացառությամբ մատների և նախադաստակի), ոտնաթաթի (բացառությամբ մատների) կոտրվածքներ՝** | |
| ա) Բոլոր բաց կոտրվածքները | 20 |
| բ) Մնացած բոլոր  կոտրվածքները | 10 |
| **6. Նախաբազկի ճաճանչոսկրի կոտրվածք տիպիկ տեղում** | |
| ա) Միայն բաց կոտրվածքները | 20 |
| բ) Մնացած բոլոր  կոտրվածքները | 10 |
| **7. Ողնաշարի կոտրվածքներ (բոլոր ողերը, բացառությամբ պոչուկի)՝** | |
| ա) Բոլոր կոմպրեսիոն կոտրվածքները | 20 |
| բ) Փուշելունների, լայնական ելունների կամ ոտիկների կոտրվածքներ | 20 |
| գ) Ողնաշարի մնացած բոլոր կոտրվածքները | 10 |
| **8. Մեկ կամ մի քանի կողերի, այտոսկրի, պոչուկի, վերին ծնոտի, թիակոսկրի, ձեռքի և ոտքի մատների կոտրվածքներ՝** | |
| ա) Բազմակի կոտրվածքներ (առնվազն մեկ բաց և մեկ լրիվ) | 16 |
| բ) Մնացած բոլոր բաց կոտրվածքները | 12 |

| | |
|---|---|
| գ) Բազմակի կոտրվածքներ, առնվազն մեկ լրիվ | 8 |
| դ) Մնացած բոլոր կոտրվածքները | 4 |
| **9. Գանգի կոտրվածք (բացառությամբ քիթը և ատամները)** | 50 |
| **10. Գլխի վնասվածքներ՝** | |
| ա) Գանգուղեղային տրավմաներ, որոնց կապակցությամբ իրականացվել է գլխուղեղի բաց վիրահատություն | 75 |
| բ) Գանգուղեղային տրավմաներ, որոնց կապակցությամբ իրականացվել է կոնսերվատիվ  հիվանդանոցային բուժում | 10 |
| գ) Գլխի մակերեսային վնասվածք | 5 |
| դ) Դեմքի մակերեսային վնասվածք, որը հասցրել է վիրահատական միջամտություն պահանջող կոսմետիկ խանգարման | 25 |
| ե) Դեմքի մակերեսային վնասվածք, որը հասցրել է ֆունկցիայի խանգարմանը կամ կորստին | 50 |
| զ) Աչքի և ակնակապճի վնասվածք | 20 |
| **11. Ներքին օրգանների վնասվածքներ** | |
| ա) Ներքին օրգանների վնասվածքներ, որոնց կապակցությամբ իրականացվել է կոնսերվատիվ հիվանդանոցային բուժում | 10 |
| բ) Ներքին օրգանների վնասվածքներ, որոնց կապակցությամբ իրականացվել է վիրահատական բուժում | 50 |
| **12. Փափուկ հյուսվածքների վնասվածքներ** | |
| ա) Վնասվածքներ, որոնց կապակցությամբ իրականացվել է կոնսերվատիվ բուժում | 5 |
| բ) Վնասվածքներ, որոնց կապակցությամբ իրականացվել է վիրահատական բուժում. | |
| ▪ Տեղային անզգայացմամբ | 3 |
| ▪ Հաղորդչական անզգայացմամբ | 5 |
| ▪ Ընդհանուր անզգայացմամբ | 10 |
| **13. Այրվածքներ (II, III, IV աստիճանների)** | |
| ա) Ամբողջ մակերեսի մինչև 5% | 7 |
| բ) Ամբողջ մակերեսի 5-9% | 10 |
| գ) Ամբողջ մակերեսի 9%-ից ավելի | 15 |
| դ) Այրվածքային հիվանդություն (անկախ այրվածքի մակերեսից և խորությունից ) | 20 |
| **14. Օրգանների/օրգան համակարգերի/վերջույթների/վերջույթների առանձին սեգմենտների կորուստ կամ ֆունկցիայի խանգարում** | |
| ա) Երկու աչքի տեսողության ամբողջական և անվերականգնելի կորուստ | 100 |
| բ) Մեկ աչքի տեսողության ամբողջական և անվերականգնելի կորուստ | 50 |
| գ) Երկու վերջույթների կորուստ | 100 |
| դ) Մեկ վերջույթի կորուստ | 50 |
| ե) Մեկ աչքի և մեկ վերջույթի ամբողջական և անվերականգնելի կորուստ | 100 |
| զ) Երկու ականջների լրիվ խլացում | 50 |
| է) Խոսելու ունակության լրիվ կորուստ | 50 |
| ը) Երկու ձեռքերի կամ երկու դաստակների լրիվ կորուստ | 100 |
| թ) Մեկ ձեռքի և մեկ ոտքի լրիվ կորուստ | 100 |
| ժ) Մեկ ձեռքի և մեկ ոտնաթաթի լրիվ կորուստ | 100 |
| ի) Մեկ դաստակի և մեկ ոտքի լրիվ կորուստ | 100 |
| լ) Մեկ դաստակի և մեկ ոտնաթաթի լրիվ կորուստ | 100 |
| խ) Երկու ոտքերի կորուստ | 100 |
| ծ) Երկու ոտնաթաթերի կորուստ | 100 |

| | |
|---|---|
| կ) Գանգոսկրի դեֆեկտի առաջացում ամբողջ լայնությամբ | 40 |
| հ) Մեկ ականջի լրիվ խլացում | 15 |
| ձ) Ստորին ծնոտի մասնակի հեռացում | 40 |
| ղ) Մեկ ձեռքի կամ մեկ դաստակի կորուստ | 60 |
| ճ) Բթամատի լրիվ կորուստ | 20 |
| մ) Բթամատի մասնակի կորուստ | 10 |
| յ) Ցանկացած մատի լրիվ ամպուտացիա | 8 |
| ն) Չորս մատների ամպուտացիա ներառյալ բթամատը | 40 |
| շ) Ձեռքի բոլոր մատների ամբողջական ամպուտացիա | 50 |
| ո) Ցանկացած մատի ֆալանգի ամպուտացիա | 4 |
| չ) Մեկ ոտքի լրիվ կորուստ (ազդրից ոտնաթաթ) | 60 |
| պ) Մեկ ոտնաթաթի լրիվ կորուստ | 45 |
| ջ) Ստորին վերջույթի կրճատում առնվազն 5 սմ | 15 |
| ռ) Ստորին վերջույթի կրճատում 1-ից 5 սմ | 10 |
| ս) Ոտքերի բոլոր մատների ամբողջական ամպուտացիա | 20 |
| վ) Ոտքերի չորս մատների՝ ներառյալ բթամատի ամպուտացիա | 20 |
| տ) Ոտքի բթամատի ամպուտացիա | 5 |
| ր) Ոտքի բթամատից տարբեր ցանկացած մեկ մատի ամպուտացիա | 3 |
| **15. Սուր թունավորում** [1] (քիմիական նյութերից և/կամ կենսաբանական ծագման թույներից (այդ թվում՝ միջատներից և/կամ թունավոր օձերից, բոտուլիզմի հարուցիչի թունավոր նյութերից (տոքսիններից)) | 10 |

**«Աղյուսակ»-ի նշումներ**

**1.** «Աղյուսակ»-ը չի կիրառվում և դրա հիման վրա հատուցում չի իրականացվում այն դեպքերում, երբ Պայմանագրի գործողության ընթացքում այս կամ այն վնասվածքը ստանալու փաստը հաստատված է միայն հատուցում ստանալու մեջ շահագրգռված անձանց կողմից ստացված հաղորդումների և գանգատների հիման վրա, նույնիսկ նման հաղորդումները և գանգատները ֆիքսված են գրավոր, այդ թվում՝ բժշկական փաստաթղթերում:

Այն վնասվածքներին, որոնց վերաբերյալ բժշկական փաստաթղթերում պարունակվող տվյալների հիման վրա հնարավոր չէ որոշել տեղի ունենալու տեղը և վայրը, վերաբերում են, մասնավորապես, «միկրոտրավմաները», «քրոնիկ տրավմատիզացիան»:

Առանց արտաքին ազդեցության վնասվածք (օրինակ՝ ծանրություն բարձրացնելու հետևանք հանդիսացած ողնաշարի, ողնուղեղի և դրա արմատիկների վնասվածքները) ստանալու գծով ապահովագրական հատուցումներ նախատեսված չեն սույն «Աղյուսակ»-ով:

**2.** Ոսկրերի կոտրվածքների դեպքում սույն «Աղյուսակ»-ի համապատասխան կետերի կիրառման համար պարտադիր պայման է հանդիսանում նշված վնասվածքների ռենտգենաբանական հաստատումը: Եթե հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձը հրաժարվում է ռենտգենաբանական հետազոտություն անցնելուց՝ նման հետազոտություն անցնելու համար բժշկական հակացուցումների բացակայության պայմաններում, ապա նշված կետերի գծով ապահովագրական հատուցումներ չեն իրականացվում:

Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով միևնույն ոսկրի կրկնակի կոտրվածքը հիմք է տալիս ապահովագրական հատուցում իրականացնել միայն այն դեպքում, եթե ներկայացված ռենտգենոգրամմաներով կհաստատվի.

**1)** նախորդ վնասվածքի բուժման ավարտի շրջանում ոսկրային բեկորների կպումը,

**2)** կրկնակի մարմնական վնասվածքից հետո արված ռենտգենոգրամմաների վրա ոսկրի կոտրվածքի նոր գծի (գծերի) առկայությունը:

Ընդ որում, կրկնակի մարմնական վնասվածքից հետո նախորդ կոտրվածքի գծով (գծերով) ոսկրի բեկորների, այդ թվում՝ օստեոսինթեզի համար կիրառված վնասված կամ չվնասված

---

*[1] սուր թունավորում չեն հանդիսանում.*
*ա) ինֆեկցիոն (վարակիչ) հիվանդությունները, այդ թվում՝ տոքսիկոինֆեկցիաները՝ անկախ վարակման ուղուց և տեսակից,*
*բ)սննդային թունավորումը,*
*գ) ալերգիան՝ անկախ այն բանից, թե ինչպես է արտահայտվում:*

